**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ**

Հարգելի՛ պարոն Արտյոմ Չերնոմորյան,

ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի և անձամբ իմ անունից շնորհավորում եմ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ:

2024 թվականը մենք կարող ենք ամրագրել որպես Հայաստան-սփյուռք հարաբերությունների զարգացմանն ուղղված արդյունավետ տարի: Գրասենյակն իր ծրագրերով, նախաձեռնություններով և նոր կապերի ստեղծմամբ շարունակում է սփյուռքը մոտեցնել հայրենիքին և առաջ տանել պետականակենտրոնության կենսունակ բանաձևը: Համաշխարհային հայկական երկրորդ գագաթնաժողովի անցկացումը ևս մեկ քայլ և եզակի հարթակ էր առողջ, երկխոսող և զարգացող հարաբերությունների ամրապնդման համար: Աներկբա է, որ հայկական սփյուռքն ունի հայրենիքի բոլոր գործընթացներին ներգրավվելու ամուր կամքը, և մեր առաքելությունն է բացել բոլոր դռները ներառականության համար:

Լիահույս եմ, որ 2025 թվականին համատեղ և համառ աշխատանքի շնորհիվ կգրանցենք նոր հաջողություններ և կհաղթահարենք բոլոր այն մարտահրավերները, որոնք կանգնած են Հայաստանի և սփյուռքի առջև:

Շնորհակալություն բոլոր այն անհատներին, կազմակերպություններին և կառույցներին, որ մեզ հետ մասին կիսում են աշխատանքի և առաջընթացի պատասխանատվությունն ու բերում իրենց ներդրումը:

Բոլորիս մաղթում եմ բարեբեր, խաղաղ և հաջող տարի:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**
**ԶԱՐԵՀ ՍԻՆԱՆՅԱՆ**